ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Սույն հայտարարությունը հրապարակվում է «08» ապրիլի 2024թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների հիմքով և սահմանված նպատակներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է «ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար՝ **ֆինանսական կրթման նյութերի վերաբերյալ հոլովակների պատրաստման ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության **CBA-2024-002 ծածկագրով** հրապարակային մրցույթի» ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված մասնակիցների ընտրությունը հիմնավորող պատճառների, անգործության ժամկետի և շահերի բախման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Հրապարակային մրցույթին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները՝

1. **«Տրիլոջի» ՍՊԸ**
2. **«:Բուն» գիտամշակութային հիմնադրամ**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտերով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակիցների ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «08» ապրիլի 2024թ. նիստի ընթացքում ամփոփվել է վերը նշված հրապարակային մրցույթի արդյունքները: Հաղթող մասնակից է ճանաչվել **«Տրիլոջի» ՍՊԸ-ն:**

Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը 5 (հինգ) օրացուցային օր է:

Սույն ընթացակարգի շրջանակում շահերի բախում չի հայտնաբերվել:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար
Սիրան Եգանյան

Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ